

«Լոյսի Նկարիչը» Ռուտով Խաչատրեան

(Շար. էջ 1-էն)

Կը Կոմիտասի Հարիւր ամեակին առիթով կազմակերպուած նկարչական մրցանքին:

1971 թուականէն ի վեր Ռ. Խաչատրեան կը գործէ ու կ'ապրի Մոսկուայի մէջ: 1978-ին ան իր առաջին անհատական ցուցահանդէսը տուած է Մոսկուայի մէջ, իսկ 1979-ին ցուցահանդէսներ տուած է Լենինկրատի եւ Օտեւայի մէջ: 1980 թուականին եւ 1983-ին անհատական ցուցահանդէսներ տուած է Երեւանի մէջ, իսկ իր երկրորդ անհատական ցուցահանդէսը Մոսկուայի մէջ կայացած է 1984-ին, (երկար տարիներու նորոգումէն յետոյ Խաչատրեանը առաջինն էր, որ բացաւ Արեւելեան ժողովուրդների պետական թանգարանը) եւ միեւնոյն տարին է որ նկարիչ Ռուտով Խաչատրեան արժանացած է Հայաստանի ժողովրդական նկարչի պատուաւոր տիտղոսին: Ռուտով Խաչատրեանը ներկայիս կը գտնուի Ամերիկայի Տիբուրյոյթի եւ Լոս Անճելէսի մէջ ներկայ գտնուելու իր անհատական ցուցահանդէսներուն: Ան առաջին անգամն է, որ կը գտնուի Ամերիկա եւ Հիւրն է «Էրբուրնի» Հրատարակչութեան:

Ստորեւ հարցազրոյցը.—

—Պարոն Խաչատրեան, մենք կ'ուզենք մեր հարցազրոյցը սկսիլ ձեր նկարչական կազմաւորման մասին կարգ մը տեղեկութիւններ բաղելով: Դուք ո՞ր ուսած էք, ի՞նչ է ձեր պատրաստութիւնը եւ ի՞նչ եղած է Նրուանդ Քոչարի դերը ձեր արուեստի զարգացման մէջ:

—Ինձ թուում է, որ սովորաբար պատահականութիւններ չեն լինում, կան օրինաւորութիւններ: Տասներեք-տասներորդ տարեկան հասակում ես սովորեցի Երեւանի նկարչական ուսումնարանում: Յետոյ ես դուրս եկայ այդ ուսումնարանից եւ պատահմամբ հանդիպեցի Երուանդ Քոչարին, որին բոլորը մանաւոր էին կանչում: Նա մի հաջողագիտ երեւոյթ էր Հայաստանի եւ ընդհանրապէս արուեստի գիտակներին, արուեստի մասին մտածողների չըմանալով Քոչարը երկար տարիներ ապրել է Փարիզում, ճաշակել էր ամբողջ համաշխարհային մշակոյթը, խորապէս ըմբռնել, եւ ժամանակակից արուեստի պատմութեան մէջ տեղծել էր նոր ուղղութիւն, ֆրանսերէն կ'ստան «բենթիւր տան լիւրա»»: Հիմադրին էր այդ ուղղութեան: Երեսուներեք տարեկան հասակում Փարիզից երիտասարդ մանստրոն վերադառնում է Հայաստան, շարունակելու իր արուեստը հայրենի հողի վրայ: Բոլորին յայտնի է Սասունցի Դաւիթի հոյակապ կոթողը, որ զարդարում է մեր Երեւանի կայարանի հրապարակը: Քոչարը քայլով հանրագիտարան էր, ամէն ինչից տեղեակ՝ եւ փիլիսոփայութիւն եւ զրականութիւն: Տասներեք տարեկան հասակից մինչեւ երեսուներեք տարեկան հասակը քրեթէ ամէն օր մենք հանդիպել ենք, զրուցել, միշտ ցոյց եմ տուել իմ նկարներու: Ամէն օր նոր աշխատանք կը տանէի Քոչարին ցոյց տալու, կամ ես կ'երթայի իրեն մօտ կամ ինքը կու գար ինձ մօտ: Այդ շփումն է, որ ինձ տուեց այս մեծ սէրն ու մղումը արուեստի բնագաւառում: Շփում որ շատ կարեւոր է արուեստագէտի համար:

Նկարչութիւնը իմ կարծիքով չեն սովորեցներ, այլ պէտք է վարակել նկարչական արուեստի սիրով վարակել աշխատասիրութեամբ, հասկանալ բուն նպատակը արուեստի, իսկ ամենակարեւորը արուեստագէտների շփումն է մեծ արուեստագէտների հետ:



«ԱՄԳԵՐ», 1985



«ՆԱԹԻՒՐ ՄՈՐՈՂ», 1985

—Ուրեմն ակադեմիական մասնաւոր պատրաստութիւն չստացաք:

—Ո՛չ, զա արդէն ինձ պէտք չէր, որովհետեւ տասներեք տարեկան հասակում, թույլ տուէք ստել, ես պատրաստ էի, այդ ճանապարհներն անցած էի ինքնուրոյն կերպով:

—Ուրեմն իմանալանք մէջ Քոչարի եւ միւս մեծ արուեստագէտներու հետ ձեր ունեցած շփումներու շնորհիւ է որ կարողացաք ձեր նկարչական անհատականութիւնը կազմաւորել:

—Այո՛, որովհետեւ անհատականութիւն կազմաւորելը միայն նկարելու մէջ չէ, այլ պէտք է անպայման հասկանալ նկարչական արուեստի ամբողջ պատմութիւնը, ժամանակակից արուեստը, ինչ որ անհրաժեշտ պայման է ամէն արուեստագէտի համար, անկախ այն բանից թէ տուեալ արուեստագէտը արդիական արուեստի հետեւող է, թէ դասական, անհրաժեշտ է, որ ամէն ինչից տեղեակ լինի: Սրանից յետոյ, արուեստագէտն ինչ որ ունի ներսում, տաղանդի ու շնորհի տակաւորութեան զէպարտ իր խօսքն անպայման կ'ստի:

—Կ'ուզէի ձեզի հարցում մը ուղղել Հայաստանի նկարիչների մասին:



«ԱՄԳԵՐ ԵՒ ԱՌՈՒՐ», 1980

Քանի՞ նկարիչներ կան այսօր Հայաստանի մէջ, ի՞նչ դպրոցներու կը հետեւին, ո՞րքանով հաղորդակից են աշխարհի նկարչական շարժումներուն, որո՞նք են այդ նկարիչներուն մէջ ամենէն շնորհալիներն ու ճանաչուածները:

—Հայաստանում այսօր մօտ ութը հարիւր (800) նկարիչ կայ professional: Սա բաւականին շատ է Հայաստանի համար: Կան նաեւ ոչ professional-ներ, թիւով բաւականին շատ: Ընդհանրապէս հայ ժողովուրդը շատ մեծ դեր է ունեցել եւ կ'ունենայ մշակութիւնի ասպարէզում: Կան շատ տաղանդաւոր նկարիչներ, երիտասարդ արուեստագէտներ, ճանաչում են համաշխարհային նկարչութեան անցեալն ու ներկան: Տեղեկութիւն միշտ կայ Հայաստանում եւ ամէն ինչ գրեթէ գիտեն հայ արուեստագէտները, բանի որ քսաներորդ դարը այնպիսի դար է որ ամէն մի կատարուած նորութիւն տեղ է հասնում: Արուեստի մասին ամսագրեր կը տպուեն, այնպէս որ ամէն ինչից տեղեակ են: Բայց իհարկէ իմանալը միայն կարեւոր չէ, այլեւ շփումը:

Տաղանդաւոր արուեստագէտներէն շատ կը սիրեմ ու կը հաւանիմ Ռուբին Ազադեանին, Մարտին Պետրոսեանին, Էլիթիկեան եղբայրներին: Շնորհալի քանդակագործներ շատ կան, ինչպէս Արա Շիրազը, Օհան Պետրոսեանը եւ շատ ու շատ ուրիշներ: Սրանք իմ սիրածներն են, իմ ընկերները, որոնց յաճախ կը հանդիպեմ, կը վիճենք, կը խօսենք: Պէտք է նրանց անհատական ցուցահանդէսներն էլ լինեն եւ Ամերիկայում եւ ուրիշ երկրներում:

Իրար նման չեն մեր նկարիչները, ամէն մէկն ունի իր անհատականութիւնն ու սեփական խօսքը:

—Լաւ, ընդհանրապէս ասոնք ի՞նչ ուղղութիւններու կը հետեւին, համաշխարհային շարժումներուն հաղորդ են, ազդուած են այդ շարժումներէն, թէ բոլորովին մոռ շարժում մը սկսած են իւրաքանչիւր, որ Հայաստանի մասով է, կամ իրենց իւրաքանչիւր է:

—Այսպէս ասեմք, Ռ. Ազադեանը գրեթէ բոլոր ուղղութիւններով էլ նկարած է, գործածած է իր արուեստի մէջ, սկսած ուսմանից մինչեւ վերացական, ժամանակակից արուեստի ձեւերը, մինչեւ «Փոփարթ» բայց խնդրել այդ չէ: Մ. Պետրոսեանը ինքնուրոյն նկարիչ է, կը ստեղծի իր գեղեցկութիւնն ու հիացումը: Նրա նկարչութիւնը գուցէ մի քիչ նման է երկխոսական «Նայիւ» նկարչութեանը, բայց «Նայիւ» չէ, այդ սկզբունքներին կը պատկանի: Որոշակի դժուար է ասել իմպրեսիոնիզմ է կամ ֆուլիզմ, կամ վերացական: Դժուար է ասել, բայց ժամանակակից են, որովհետեւ հնարաւոր չէ չլինել ժամանակակից: Ես չեմ կարծի թէ այսօրուայ ամերիկեան նկարչութիւնն է ժամանակակիցը: Ժամանակակիցը շատ յաւաքեալ կան հասկացութիւն է, ճշմարիտն ու գեղեցիկն են արուեստի մէջ ժամանակակիցը: Եթէ կայ իսկական արուեստ, իսկական որակ, եթէ կայ հոգի, սէր, սա արդէն ժամանակակից է եւ մենք բոլորս էլ դրա պահանջն ու կարիքն ունենք:

—Կա՞յ, այսպիսի ըմբռնում արուեստի մէջ, ըսեմք հայ արուեստի մէջ հայկական արուեստ, կամ հայկականը արուեստի մէջ:

—Անշուշտ աւանդութիւնը գոյութիւն ունեն, ես այն կարծիքն ունեմ, որ նոյնիսկ վերացական մտածող արուեստի մէջ նորից կարող է հայկական նկարիչ, արուեստագէտ լինել: Արշիլ Գորկին Ամերիկայի մէջ տեղեկագործած է, բայց ես նրա մէջ կը տեսնեմ շատ հայկականութիւն, հայկական ոգի, մտածելակերպ, հայ մարդը կը տեսնեմ, հայկական պատկերներ, ձեւեր, իրական պատկերներ կը տեսնեմ, չնայած որ Գորկին վերացական նկարիչ է:

(Շարունակելի 1)

EDITIONS (213) 465-6168
FREROUNI 5825 Sunset Blvd., 202

«Լույսի Նկարիչը» Ռուտոլֆ Խաչատրեան

Երեքշաբթի, Հոկտեմբեր 20-ին Տիբուրյեց Լուս Աճեցիւ ժամանեց հայրենի տաղանդաւոր գեղանկարիչ Ռուտոլֆ Խաչատրեան:

Խաչատրեանի գործերուն առաջին հանդէպ ԱՄՆ-ի մէջ տեղի ունեցաւ Տիբուրյի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ Գեղարուեստի Կեդրոնին մէջ, Հոկտեմբեր 18-20-ին արձանագրելով մեծ յաջողութիւն:

Ռուտոլֆ Խաչատրեան ճիւղն է «Էքսպրեսի» հրատարակչութեան. «Էքսպրեսի» հայալեզու տարբերակը Լուս Աճեցիւ պոզիտիւ փայ հաստատուած Heritage Gallery-ի մէջ, Նոյեմբեր 12-ին տեղի պիտի ունենայ Խաչատրեանի գործերու ցուցահանդէսին բացումը: Տեղին է նշել, որ Խորհրդային Գեղարվեստի մը առաջին անգամ Խաչատրեան ցուցահանդէս-վաճառքն է ԱՄՆ-ի մէջ:

Ռուտոլֆ Խաչատրեան ծնած է 1937-ին Երևանի մէջ, առ իր մանկական տարիքէն սկսած է նկարել եւ տասնութ տարեկանէն ի վեր մասնագետացած է բազմաթիւ ցուցահանդէսներու, Հայաստանին մէջ ըլլալ թէ միտքնական մակարդակին վրայ:

Ռուտոլֆի կեանքը ամբողջական չըլլալով մը կրած է իր տոմարներէն տարեկանին, երբ հանդիպած է հայրենի նկարիչ եւ քանդակագործ Երուանդ Քոչարին: Երուանդ Քոչար անձնակի ազդեցութիւն թողած է Երուանդ Գրիգորեանի արուեստագէտի զարգացման եւ արուեստի աշխարհայեցողին վրայ: Քոչարն է, որ Երուանդ արուեստագէտը ծանոթացուցած է Լեւոնարոս Տաճարին եւ Ալբրեխտ Տիւրքին նկարչական աշխարհներուն: Եւ երբ առաջին անգամ տեսած է Ռ. Խաչատրեանի գործերը Երուանդ Քոչարը քաջազանցած է հեղինակին թէ վերածնունդ է Լեւոնարոսի ոգին:

Խաչատրեանի գործերը ցուցադրուած են աշխարհի տարբեր երկրներու մէջ եւ արժանացած են բազմաթիւ մրցանակներու: Անոր գործերը ինքնաշարժուած են Գերմանիոյ, Ֆրանսայի, Չեքոսլովակիայի, Պոլսի, Իտալիոյ եւ Անգլիոյ մէջ: 1960-ին Ռ. Խաչատրեան ընտրուած է Ս.Ս.Հ.Մ.-ի նկարիչներու միութեան անդամ, 1969-ին առ շահած է առաջին մրցանակը (Ծառ, էջ 4)



«ԷՔՍՊՐԵՍ», 1981 ԼԵՆԿԱՍ ՍԵՓՐԱ

«Ցեղասպանութիւնը Անժամանցելի Ոճիւր Մըն Է»

Ստորեւ կը հրատարակենք կարեւոր յօդուած մը՝ որ լոյս տեսած է Խորհրդային Միութեան հրատարակչութեան Գրականագիտութեան Ակադմիայի Անդամ Գրիգոր Քոչարի մօտ: Այս օրը, 70 տարի առաջ, Թուրքիոյ մէջ սկսած հայ ժողովուրդի դանդաղացման ընթացքին ընդմիջումը:

Յօդուածը լոյս բնծալուած է այս տարուան Մարտ-Ապրիլ ամիսներու թիւին մէջ, ցեղասպանութեան 70-ամակի արիւթով:

Ապրիլ 24-ին հայերը կը յիշատակեն Թուրքիոյ կողմէ հայերու դէմ գործադրուած ցեղասպանութիւնը: Այս օրը, 70 տարի առաջ, Թուրքիոյ մէջ սկսած հայ ժողովուրդի դանդաղացման ընթացքին ընդմիջումը:

Հայաստանի եւ իր ժողովուրդի պատմութիւնը կ'երկարէ շուրջ հազարամեակներու վրայ: Տեղեկութեամբ՝ Արեւմուտքը, Արեւելքին կապող ճամբաներու խաչմերուկին, ունենալով ազգամիջապահան եւ տնտեսական նպաստաւոր դիրք, Հայաստանը դարձեր շարունակ դարձաւ արեւմտահայ պատերազմներու թատերաբեմ:

Ան ունեցած է հրաշալի վերելքներու եւ ողբերգական անկումներու շրջաններ. իր գիւղերն ու քաղաքները երբեմն կը ծաղկէին իսկ այն օրերուն միջապահայի վերածնունդին:

20-րդ դարու սկիզբին, Հայաստանի պատմական տարածութիւնը բաժնուեցաւ երեք պետութիւններու միջեւ: Մինչեւ 1914-18 առաջին համաշխարհային պատերազմը, հայ ժողովուրդը (որ այդ ժամանակ մօտ 4 միլիոն կը հաշուէր), այդ տեղեկանքներուն մէջ ինքնապիտան կը լինէր: Հաւաքական կեանք մը:

(Ծառ, էջ 3)

Մայր Հայրենիքը Մեծ Ծուրով Կը Նշէ Բաժնի 150-Ամեակը

Երևանէն Արմենիոն կը հաղորդէ թէ Մայր Հայրենիքի մէջ ի մօտոյ մեծ շուրջ կը նշուի մեծ վիթխարի Բաժնի (Յակոբ Մեկր-Յակոբեան) ծննդեան 150-ամեակը: Հանրապետական Ցորերին կան հիմնական ծրագրեր, վարչապետ Ֆադէյ Մարգարեանի նախագահութեամբ, վերջերս քննարկուած է այդ առիթով նախատեսուած միջոցառումները, որոնց գլխավորներն են. —

— Հանրապետութեան ուսումնական հաստատութիւններուն, զարգացման եւ զարգացման ընթացքին մէջ տեղի կ'ունենան Բաժնիի ստեղծագործութեան նուիրուած գրական ընթերցումներ:

— «Գիտելիք» հանրապետութեան ընկերութիւնը, Հայաստանի Գրողներու Միութեան հետ միասին, կը կազմակերպէ դաստիարակութիւններ եւ զեկուցումներ՝ մեծ գրողի կեանքին ու գրական գործունէութեան մասին:

— Ցորերին նախատեսուած է հրատարակել հայկական Ս.Ս.Հ.Մ. Գիտելիքներու Ակադեմիայի Մ. Արեւելեան անուան գրականութեան ինստիտուտի եւ Հայաստանի Գրողներու Միութեան միացեալ գիտական նստաշրջան:

— Կը հրատարակուի մենագրութիւններ՝ նուիրուած Բաժնիի ստեղծագործութեան, իր կեանքին ու գործունէութեան:

— Հանրապետութեան թերթերու ու հանդէսներու, հեռատեսիլի ու ռադիոյ խմբագրութիւնները կը հրապարակեն յօդուածներ եւ կը կազմակերպեն հաղորդումներ:

— Հայաստանի Նկարիչներու Միութիւնը կը թողարկէ յօդուածներ նուիրուած յուշամատակալ եւ յուշանշաններ:

— Բաժնիի կիսադարին կը կանգնեցուի իր անուր կը թիւ 36 զարգացման առիթ:

— Ցորերին նախատեսուած է երկու թերթի տեղի կ'ունենան Լեւոնարոսի, Կիւրայեանի եւ հանրապետութեան

Ցեղասպանութիւնը Միջազգային Ոճիւր Ցայտարարելու Եւ Վաւերացնելու Օրինագիրը

Նախագահ Բեկըն պաշտօնապէս պահանջ ներկայացուց Մերադոյի, որպէսզի 1985-ի տարեկան առաջ քաշուի առնէ վաւերացնելու համար ցեղասպանութեան Օրինագիրը, ցեղասպանութիւնը միջազգային յանցանք յայտարարելով: Օրինագիրը 37 տարեկ ի վեր Մերադոյի սեղանի վրայ կը գտնուի:

Նախագահ Բեկըն իր պահանջը ներկայացուց նամակով մը ուղղուած Մերադոյի մեծամասնական առաջնորդ Մերադոյեան Բալլեր Տոյի: Այս նամակով, նախագահը առաջը առած կ'ըլլայ այն անել կացութեան որ ցցուած էր ցեղասպանութեան Ուխտին դէմ:

Ցեղասպանութեան Օրինագիրը պատրաստուած էր Համաշխարհային Երկրորդ Պատերազմին միջոցաւ հրեաներու եւ այլ խմբակցութեան ջարդարարութեան արիւթով, Նացիներու կողմէ գործադրուած:

Բալլեր Տոյի ուղղուած նամակի բովանդակութիւնը հրապարակեց Մերադոյեան Զանգ Բերքի, որ 45 այլ ծերակուտականներու հետ Հոկտեմբեր 11-ին նախագահ Բեկընի դիմում կատարած էր, Ցեղասպանութեան Ուխտը վաւերացնել նախքան Կորպորացիոյ հետ ունենալիք հանդիպումը:

միւս քաղաքներուն մէջ:
— Ցորերին նախատեսուած է հրատարակել Բաժնիի ծննդեան 150-ամեակին նուիրուած հանրապետական նիստով, որ տեղի կ'ունենայ 1985 թուականի Դեկտեմբերին, Ա. Սպիտակոյեանի անուան օֆերայի եւ պաշտօնական թատրոնի մէջ: